

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2020

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Հասարակական աշխարհագրության ճյուղերից է.


- 1) հնէաաշխարհագրությունը
- 2) կլիմայագիտությունը
- 3) երկրագրությունը
- 4) ջրաբանությունը

2 Երևանի հեռավորությունը հարավային բևեռային շրջագծից կլինի.

- 1) $86,5^\circ$
- 2) $96,5^\circ$
- 3) $106,5^\circ$
- 4) $116,5^\circ$

3 Նկար 1.- ում տրված քարտեզը կազմելու համար ի՞նչ պրոյեկցիա է կիրառվել:

- 1) հասարակածային
- 2) գլանային
- 3) ազիմուտային
- 4) կոնային



նկար 1.

4 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Երկրագնդի առանցքի թեքությունն իր պտտման ուղեծրի հարթության նկատմամբ կազմում է $66,5^\circ$:
- 2) Արեգակի շուրջը երկրագնդի պտտման երկարությունը 940 մլն կմ է:
- 3) Հունիսի 22-ին բևեռային ցերեկ լինում է հարավային բևեռային շրջագծի վրա:
- 4) Մարտի 21-ին առավելագույն ջերմություն ստանում են հասարակածային լայնությունները

5 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աղավաղումներն աշխարհագրական քարտեզում ավելի մեծ են, քան հատակագծում:
- 2) Անվանական մասշտաբը պատկերվում է կոտորակի տեսքով:
- 3) Քարտեզում հավասար մթնոլորտային ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է իզոթերմ:
- 4) Հարաբերական բարձրությունը Երկրի մակերևույթի որևէ կետի բարձրությունն է՝ հաշված ծովի մակարդակից:

6

Քարտեզում երկու կետերի հեռավորությունը 6 սմ է, իսկ իրականում՝ 48 կմ:
Այդ քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1: 80 000
- 2) 1: 800 000
- 3) 1: 8 000 000
- 4) 1: 80 000 000

7

Ո՞ր դարաշրջանում է երկրակեղևը կրել ալպյան ծալքավորության ազդեցությունը:

- 1) Մեզոզոյան
- 2) Կայնոզոյան
- 3) Պրոտերոզոյան
- 4) Պալեոզոյան

8

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկրակեղևի օվկիանոսային տիպում բազալտային շերտը բացակայում է:
- 2) Ուժեղ երկրաշարժի ժամանակ երկրակեղևի ամբողջ տեղամասերի թեկուզ մի քանի մետրով կտրուկ իջեցումը կամ բարձրացումը բացառվում է:
- 3) Հարթավայրեր առաջանում են ջրիկ լավայի արտավիժումների հետևանքով:
- 4) Ծալքաբեկորավոր լեռներում ծալքերը և բեկորներն առաջանում են տեկտոնական շարժումների բացակայության պատճառով:

9

Մթնոլորտում ո՞ր բարձրություններում է տարածվում օզոնի շերտը.

- 1) 25 - 30 կմ
- 2) 30 – 35 կմ
- 3) 35 – 40 կմ
- 4) 40 – 45 կմ

10


Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Քամու միջոցով նավարկում են առագաստանավերը:
- 2) Քամու միջոցով արտադրվում է էլեկտրաէներգիա:
- 3) Քամիներն առաջացնում են ավազաբլուրներ:
- 4) Քամիներն առաջացնում են ցունամիներ:

11

Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆը պատկերող նկարում n թ ստառով է նշված մայրցամաքային ծանծաղուտը.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



12

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ինչքան մեծ լինեն գետի անկումն ու թեքությունը, այնքան մեծ կլինի նրա էներգետիկ կարողությունը:
- 2) Կասպից և Արալյան լճերն ունեն տեկտոնական ծագում:
- 3) Գրենլանդիայում և Անտարկտիդայում լայն տարածում ունեն լեռնահովտային սառցադաշտերը:
- 4) Գետի ջրի մակարդակի տատանումը կոչվում է գետի հոսք:

13

Բնութագրումով որոշել բնական զոնան.

Այս բնական զոնան ունի լավ արտահայտված երկու սեզոն՝ խոնավ, տաք ամառներ, տաք և չոր ձմեռներ: Լայն տարածում ունի Աֆրիկայում և Հարավային Ամերիկայում: Ո՞ր բնական զոնան է.

- 1) տափաստան
- 2) սավաննա
- 3) տունդրա
- 4) անապատ

14

Բարեխառն գոտու փշատերև անտառները հիմնականում n թ հողերի վրա են տարածվում.

- 1) կարմրագորշ
- 2) դարչնագույն
- 3) կարմրադեղին
- 4) պողգոլային

15

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Անտարկտիդայի հիմքում ընկած է Անտարկտիկական հնագույն պլատֆորմը:
- 2) Անտարկտիդայի արևմուտքում ձգվում է Անտարկտիկական Անդերը:
- 3) Անտարկտիդայի հզոր սառցադաշտերի տակ կան լեռնաշղթաներ, սարահարթեր, հսկայական գոգավորություններ և նույնիսկ իջվածքներ:
- 4) Անտարկտիկայում չկան գործող հրաբուխներ, և չեն լինում երկրաշարժեր:

16

Ո՞ր գույգի կղզիներն են նույն ծովում.

- 1) Հոնայու և Կալիմանտան
- 2) Սուլավեսի և Ճամայկա
- 3) Հոկայդո և Թայվան
- 4) Սարդինիա և Կորսիկա

17

Հարավային Ամերիկայի ամենաբարձր և ամենացածր կետերի բարձրությունների տարբերությունը կազմում է.

- 1) 6800 մ
- 2) 6900 մ
- 3) 7000 մ
- 4) 7100 մ

18

Ընտրել Հարավային Ամերիկայի բնական զոնաների տեղական անվանումների և բնական զոնայի կամ այն ընդգրկող տարածքի համապատասխանությունների ճիշտ շարքը.

ա. պարամոս	1. խոնավ հասարակածային անտառներ
բ. պամպա	2. բարձրալեռնային մարգագետինները Անդերի լեռնաշղթայում
գ. սելվաս	3. սավաննաները Բրազիլական սարահարթում
դ. կամպոս	4. մերձարևադարձային տափաստանները Լա-Պլատայի դաշտավայրի հարավում

- 1) ա-2, բ-4, գ-1, դ-3
- 2) ա-3, բ-4, գ-1, դ-2
- 3) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 4) ա-2, բ-1, գ-4, դ-3

19

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Կենտրոնական Ամերիկայում, Կարիբյան ծովի կղզիներում տարածվում են խոնավ արևադարձային անտառներ և սավանաներ:
- 2) Հյուսիսային Ամերիկայի տունդրայի զոնայում տիրապետող են մամուռներն ու քարաքոսերը:
- 3) Կանադական կղզեխմբում ու Գրենլանդիայում առավելապես տարածվում է սառցային զոնան:
- 4) Հյուսիսային Ամերիկայում չկան անապատներ և կիսաանապատներ:

20 Ատլանտյան օվկիանոս թափվող գետ է.

- 1) Մակենզին
- 2) Միսիսիպին
- 3) Կոլորադոն
- 4) Կոլումբիան

21 Ո՞ր շարքում *սխալ* կա.

- 1) Նամիբ, Կալահարի, Սահարա—անապատներ
- 2) Տանգանիկա, Նյասա, Շարի—լճեր
- 3) Զամբեզի, Նեղոս, Օրանժ—գետեր
- 4) Դրակոնյան, Կապի, Ատլասի—լեռներ

22 Աֆրիկայի մերձարևադարձային մշտականաչ անտառների ու թփուտների բնական զոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մթնոլորտային տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:
- 2) Հողային ծածկում գերակշռում են շագանակագույն և մոխրագորշ հողերը:
- 3) Տարածված բուսատեսակներն են բաոբաբը, ֆիկուսը, կաուչուկատու հևեան:
- 4) Տարածված կենդանատեսակներն են էմու ջայլամը, դինգո շունը և բադակտուցը:

23 Եվրասիայի բարեխառն կլիմայական գոտու վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ամենափոքր տարածքը զբաղեցնում է բարեխառն ցամաքային կլիմայի մարզը:
- 2) Ամենամեծ տարածքը զբաղեցնում է բարեխառն մուսսոնային կլիմայի մարզը:
- 3) Ծովային կլիմայի մարզը բնութագրվում է մեղմ ձմեռով, զով ամառով:
- 4) Ցամաքային կլիմայի մարզում կլիմայի ցամաքայնությունն արևմուտքից արևելք նվազում է:

24 Ո՞ր երկիրն է եղել ԽՍՀՄ-ի կազմում.

- 1) Մոնղոլիան
- 2) Էստոնիան
- 3) Վիետնամը
- 4) Լեհաստանը

25 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ավստրալիան և Ռուսաստանը խտաբնակ երկրներ են:
- 2) Քրիստոնեությունը և բուդդայականությունը ազգային կրոններ են:
- 3) Զարգացող երկրներում բարձր են ուրբանիզացման աճի տեմպերը:
- 4) Մեգալոպոլիսները խմբային տարաբնակեցման պարզ ձևեր են:

26

Երկրի բնակչության թիվը 8 մլն մարդ է, բնակչության միջին խտությունը՝ 160 մարդ/կմ²: Երկրի տարածքը կլինի.

- 1) 20 հազ. կմ²
- 2) 40 հազ. կմ²
- 3) 50 հազ. կմ²
- 4) 80 հազ. կմ²

27

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Թեյի հայրենիքը Չինաստանն է:
- 2) Բրինձը հացահատիկների շարքում ամենաջերմասերն ու խոնավասերն է:
- 3) Եգիպտացորենի հայրենիքը Եգիպտոսն է:
- 4) Վուշը ցրտադիմացկուն և խոնավասեր բույս է, մշակվում է բարեխառն գոտու հյուսիսային լայնություններում:

28

Արտադրանքի ծավալով համաշխարհային արդյունաբերության առաջատար ճյուղն է.

- 1) մեքենաշինությունը
- 2) էլեկտրաէներգետիկան
- 3) մետաղաձուլությունը
- 4) թեթև արդյունաբերությունը

29

Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Եմենում բացակայում է երկաթուղին
- 2) Տարածաշրջանի տնտեսապես ամենազարգացած պետությունը Իսրայելն է:
- 3) Թուրքիայի տնտեսության առաջատար ճյուղը նավթարդյունահանումն է:
- 4) Իրանը և Իրաքը փյունիկյան արմավի մշակությամբ աշխարհի առաջատար երկրներն են:

30

Բնութագրումով որոշել երկիրը.

Այս ասիական պետությունն ունի բազմազգ բնակչություն: Բնակչության մեծ մասն ուղղափառ քրիստոնյաներ են: Արդյունաբերության մեջ առաջնային տեղը պատկանում է գյուղատնտեսական հումք մշակող ճյուղերին: Աճեցվող կարևորագույն մշակաբույսերն են թեյը և ցիտրուսային պտուղները: Մակերևույթը լեռնային է, հարուստ է ռեկրեացիոն ռեսուրսներով:

- 1) Ադրբեջան
- 2) Հորդանան
- 3) Վրաստան
- 4) Լիբանան

31

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման վրա ազդում է ջրատարության գործոնը:
- 2) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման գործում մեծ է կոմբինացման (համակցման) դերը:
- 3) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման վրա մեծ ազդեցություն ունի էկոլոգիական գործոնը:
- 4) Քիմիական արդյունաբերությունը գերազանցապես տեղաբաշխված է զարգացող երկրներում:



քարտեզ 1

32

Ո՞ր պետությունն է քարտեզ 1-ում նշված Դ տառով.

- 1) Բուլղարիա
- 2) Ռումինիա
- 3) Հունգարիա
- 4) Մոլդովա

33

Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզ 1-ում նշված Ը տառով.

- 1) Օսլո
- 2) Հելսինկի
- 3) Ստոկհոլմ
- 4) Ռիգա

34

Կենտրոնական Ասիա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տրանսպորտային ցանցը խիտ է:
- 2) Բնակչության միջին խտությունը բարձր է:
- 3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 4) Թեթև արդյունաբերությունը զարգանում է ներկրվող հումքի հաշվին:

35

Մշակաբույսերից որի՞ մշակությամբ է Չինաստանն աշխարհում գրավում առաջին տեղը.

- 1) կակաոյի
- 2) բամբակենու
- 3) սուրճի
- 4) արևածաղկի

36

Աֆրիկայի ո՞ր երկրները ելք չունեն դեպի ծով.

- 1) Նիգեր և Ռուանդա
- 2) Թունիս և Մարոկկո
- 3) Գանա և Մավրիտանիա
- 4) Մոզամբիկ և Տանզանիա

37

Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աշխարհի ամենախիտ բնակեցված մայրցամաքներից է:
- 2) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 3) Բնակչության թվով ամենախոշոր քաղաքը Կանբերան է:
- 4) Ստորերկրյա արտեզյան ջրերի պաշարներով աշխարհի առավել հարուստ երկրներից է:

38

Ամերիկայի Միացյալ Նահանգներին (ԱՄՆ) են պատկանում.

- 1) Ֆոլկլենդյան կղզիները
- 2) Սեյշելյան կղզիները
- 3) Հավայան կղզիները
- 4) Կանարյան կղզիները

39

Լատինական Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Նավթի արդյունահանման ծավալով առաջատար երկիր է Չիլին:
- 2) Պարանա գետի վրա է կառուցված Իտայպու խոշորագույն ջրէկը:
- 3) Շաքարի արտադրության ծավալով Բրազիլիան աշխարհում առաջինն է:
- 4) Խոշորագույն նավահանգիստներից են Բուենոս Այրեսն ու Ռիո դե ժանեյրոն:

40

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնական գազի պաշարներով աշխարհում գրավում է առաջին տեղը:
- 2) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
- 3) Նավթի հիմնական պաշարները տեղաբաշխված են Կուզբասի, Կանսկ-Աչինսկի ավազաններում:
- 4) Ոսկու արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած է Կոլա թերակղզում:

41


Ի՞նչ ծագման լճեր չկան Հայկական լեռնաշխարհում.

- 1) սառցադաշտային
- 2) մնացորդային
- 3) տեկտոնահրաբխային
- 4) փլվածքային

42

ԼՂՀ (Արցախի Հանրապետություն) ո՞ր վարչական շրջանը և կենտրոնը համանուն չեն.

- 1) Մարտակերտի
- 2) Ասկերանի
- 3) Քաշաթաղի
- 4) Հադրութի



քարտեզ 2

43 Քարտեզ 2-ում Վեդի գետը ո՞ր տառով է նշված.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

44 Քարտեզ 2-ում Վաղարշապատ քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը

45 ՀՀ բնակչության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Թվաքանակով երկրորդ ազգը ասորիներն են:
- 2) Եզդիները հիմնականում բնակվում են Սյունիքի մարզում:
- 3) Ազգային կազմով աշխարհի առավել միատարր պետություններից է:
- 4) Ռուսները հիմնականում բնակվում են Վայոց ձորի մարզում:

46 ՀՀ-ում ուրբանիզացվածության ամենաբարձր մակարդակ ունեցող մարզն է.

- 1) Սյունիքը
- 2) Արարատը
- 3) Արմավիրը
- 4) Շիրակը

47 ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
- 2) Մետաղաձուլության մասնագիտացված ուղղություններից է մոլիբդենի արտադրությունը:
- 3) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
- 4) Ալյումինի արտադրությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):

48 Ո՞ր մարզում չկա երկաթուղային կայարան.

- 1) Գեղարքունիք
- 2) Վայոց ձոր
- 3) Շիրակ
- 4) Լոռի

49

Արագածոտնի մարզի վերաբերյալ **ո՞ր** պնդումն է *սխալ*.

- 1) Ընդերքը հարուստ է հրաբխային ապարատեսակներով:
- 2) Տարածքի բարձրաչափական նիշերի մեծ տարբերության պատճառով կլիման բազմազան է:
- 3) Հիմնական ջրային զարկերակը Քասաղ գետն է՝ Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով:
- 4) Հողային ծածկույթում գերակշռում են կիսաանապատային հողերը:

50

Կոտայքի մարզում բուսաբուծության **ո՞ր** ենթաճյուղը զարգացած չէ.

- 1) ծխախոտի մշակությունը
- 2) հացահատիկի մշակությունը
- 3) պտղաբուծությունը
- 4) բանջարեղենի մշակությունը

51

Ո՞ր պնդումն է *սխալ*.

- 1) Անտառներն ունեն ջրապաշտպան, հողապաշտպան, դաշտապաշտպան, կլիմայաստեղծ նշանակություն:
- 2) Անտառների պահպանմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառում է հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը:
- 3) Բուսականությունը մասնակցում է նյութերի և էներգիայի համամոլորակային շրջապտույտին:
- 4) Լուսասինթեզի ժամանակ բույսերը կլանում են թթվածին և արտանետում ածխաթթու գազ:

52

Օդային ավազանի առավել մեծ տեխնաձին աղտոտվածություն ունեցող երկիր է.

- 1) Բրազիլիան
- 2) Պորտուգալիան
- 3) Ճապոնիան
- 4) Ավստրալիան

53

Հետևյալներից **ո՞րը** հողաբարելավման միջոցառում չէ:

- 1) ոռոգում
- 2) քարամաքրում
- 3) անտառապատում
- 4) կլիմայավարժեցում

54

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Արգելոցը հատուկ պահպանվող տարածք է, որտեղ ամբողջությամբ արգելված է մարդու արտադրական գործունեությունը:
- 2) Բուսական և կենդանական աշխարհը շատ աղքատ է երկրագնդի մերձարևադարձային գոտիներում:
- 3) Ջերմոցային էֆեկտի ուժեղացման հետևանքով բարձրանում է երկրագնդի միջին ջերմաստիճանը:
- 4) Հողերի վատթարացման պատճառ է արոտավայրերի գերարածեցումը:

55

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Թույլ զարգացած երկրներին հատկապես բնորոշ է պարենային հիմնախնդիրը:
- 2) Համաշխարհային օվկիանոսը երկրագնդի մասշտաբով կլիմայի կարգավորիչ է:
- 3) Մարդկային զարգացման համաթվի հաշվարկման գլխավոր բաղադրիչ է տվյալ պետության քաղաքական իրավիճակը:
- 4) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:

56

Գրել այն ապարների համարները, որոնք ունեն օրգանական նստվածքային ծագում.

- | | |
|----------|-------------|
| 1) ավազ | 5) գնեյս |
| 2) խարամ | 6) խճաքար |
| 3) տորֆ | 7) օբսիդիան |
| 4) տուֆ | 8) կրաքար |

57

Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել տեկտոնական ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|-------------|--------------|
| 1) Բայկալ | 5) Աթաբասկա |
| 2) Մեծ արջի | 6) Վետերն |
| 3) Չադ | 7) Տանգանիկա |
| 4) Նյասա | 8) Արալյան |

58

Տրված են ծովային սառը հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|------------------|----------------|
| 1) Բենգելյան | 5) Կանարյան |
| 2) Կալիֆոռնիական | 6) Օյա Միո |
| 3) Պերուական | 7) Սոմալիի |
| 4) Լաբրադորյան | 8) Ֆոլկլենդյան |

59

Գրել այն լեզուների համարները, որոնք չեն մտնում սլավոնական լեզվախմբի մեջ.

- | | |
|--------------|----------------|
| 1) լեհերեն | 5) չեխերեն |
| 2) սերբերեն | 6) սլովակերեն |
| 3) շվեդերեն | 7) ռուսերեն |
| 4) էստոներեն | 8) բուլղարերեն |

60

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են խոզաբուծությամբ.

- | | |
|--------------|-------------|
| 1) Հնդկաստան | 5) Թուրքիա |
| 2) Ինդոնեզիա | 6) Չինաստան |
| 3) Պակիստան | 7) Գերմանիա |
| 4) Իրան | 8) Ճապոնիա |

61

Գրել այն տարածաշրջանների համարները, որոնք մասնագիտացված են խաղողագործության մեջ.

- | | |
|-------------------|-------------------------|
| 1) Սևանի ավազան | 5) Կոտայքի սարավանդ |
| 2) Արարատյան դաշտ | 6) Սյունիքի բարձրլանդակ |
| 3) Շիրակի դաշտ | 7) Լոռվա սարահարթ |
| 4) Արփայի հովիտ | 8) Մասրիկի դաշտ |

62

Հայկական լեռնաշխարհի տրված գետերի համարները դասավորել ըստ դրանց վտակների վրա գտնվող ջրվեժների հետևյալ հաջորդականությամբ՝ Թորթումի, Շաքիի, Թոչկանի.

- | | | |
|-----------|-----------|----------|
| 1) Փամբակ | 2) Որոտան | 3) Ճորոխ |
|-----------|-----------|----------|

63

Տրված հարթավայրերը դասավորել բարձրության աճման կարգով.

- | | |
|--------------|------------------|
| 1) Միջագետքի | 3) Մերձկասպյան |
| 2) Շիրակի | 4) Միջինռուսական |

(64-65). Լեռան զագաթին մթնոլորտային ճնշումը 340 մմ է, օդի ջերմաստիճանը՝ -6°C , իսկ ստորոտին՝ $+12^{\circ}\text{C}$ (հաշվարկը կատարել 6°-ով).

64 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

65 Որոշել մթնոլորտային ճնշումը ստորոտում:

(66-67) Քաղաքի բնակչության թիվը 80 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 800 մարդ: Եկածների թիվը 2 000 մարդ է, մեկնածների թիվը՝ 1500 մարդ.

66 Որոշել միգրացիայի մնացորդը:

67 Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

68 Երկրի նավթի պաշարները կազմում են 2,4 մլրդ տ, տարեկան հանույթը՝ 80 մլն տ: Որքա՞ն է ռեսուրսաապահովվածությունը:

69

Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Տնտեսությունը գտնվում է զարգացման հետինդուստրիալ փուլում:
- 2) ՀՆԱ-ի կառուցվածքում ամենափոքր բաժինը զբաղեցնում է սպասարկման ոլորտը:
- 3) Արդյունաբերության առաջատար ճյուղերից են մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը:
- 4) Գյուղատնտեսությունն աչքի է ընկնում մեքենայացման ու քիմիացման բարձր մակարդակով:
- 5) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 6) Արտահանման մեջ գերակշռում են բնական գազն ու նավթամթերքները:

70

ՀՀ Գեղարքունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Առկա են քրոմիտի և ոսկու պաշարներ:
- 2) Կլիման բարեխառն լեռնային է:
- 3) Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է:
- 4) Հողածածկույթում գերակշռում են լեռնաանտառային գորշ հողերը:
- 5) Անասնապահության առաջատար ճյուղն է խոզաբուծությունը:
- 6) Մարզի գյուղերում է ապրում բնակչության մեկ երրորդը: